Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023.
«Շիրակի մարզի դպրոցներին և մանկապարտեզներին կրթական սարքավորումների տրամադրում»
ծրագրի ստորագրման արարողություն

2023 թ.ի հոկտեմբերի 12-ին Շիրակի մարզի Գյումրու համար 11 դպրոցում տեղի ունեցավ «Շիրակի մարզի դպրոցներին և մանկապարտեզներին կրթական սարքավորումների տրամադրում» մինչև 95,202 դոլար ֆինանսավորմամբ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության ստորագրման արարողությունը:

Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Ֆուկուշիմա Մասանորին, Դպրոցների ծնողական խորհրդի անդամների ազգային ասոցիացիա (ԴԾԽԱԱԱ) ՀԿ-ի տնօրեն տիկին Ռուզաննա Հակոբյանը, Գյումրի համայքնի ղեկավարի տեղակալ պարոն Վահագն Մկրտչյանը, դպրոցի անձնակազմը, աշակերտները և նրանց ծնողները:

Ծրագիրն իրականացվել է կրթության որակի բարելավման նպատակով՝ ապահովելով դպրոցների և մանկապարտեզների երեխաների համար դրական ուսուցման և զարգացման միջավայրի ստեղծում՝ Շիրակի մարզի 5 դպրոցներին և 5 մանկապարտեզներին կրթական սարքավորումներ (գրասեղաններ, աթոռներ, մահճակալներ և դարակներ) տրամադրելու միջոցով: Արդյունքում տարեկան ավելի քան 3000 երեխա և աշակերտ կօգտվի ծրագրից:

Ողջույներ աշակերտների կողմից

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Տրամադրված դպրոցական կահույքը

Նախադպրոսական տարիքի երեխաների համար նախատեսված մահճակալներ

Մեդիա հղումներ. https://www.youtube.com/watch?v=5hIgRy2PeTw